# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 09-Ա

## ԼՄ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, 41 հոդվածի 7-րդ կետով՝ հիմք ընդունելով Լոռու մարզպետի 10 հունվարի 2020 թվականի թիվ 10-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Լեռնապատ համայնքի տարածքում 2020թ.-ի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

Հաստատել Լեռնապատ համայնքի տարածքում 2020թ.-ի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված 1-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

20 20թ. փետրվարի 04
գ.Լեռնապատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2020թվականի N 08-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 15.01.2020թ. թիվ 01/107.4/00300-2020 գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին>> թիվ 46-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետով

Որոշում եմ.

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների>> պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ապրես Ոսկանյանին, ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

4. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Լեռնապատ համայնքի ղեկավարին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ**

2020թ. հունվարի 31
գ.Լեռնապատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 7-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և առաջնորդվելով Լեռնապատ համայնքի ավագանու 2020թ.-ի հունվարի 30-ի << Լեռնապատ համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 24-ի <<Լեռնապատ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N61-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին >> թիվ 2-Ն որոշմամբ՝

որոշում եմ.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2020թ.-ի բյուջեն՝ եկամտային և ծախսային մասերի բաշխումը ըստ եռամսյակների:

2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2020թ.-ի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2020 թ. հունվարի 30
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

29 Հունվար 2020 թվականի թիվ 6-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-041-006-17 ԾԱԾԿԱԳՐԻ ՍԱՐԳԻՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշմամբ:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

06-041-006-17 ծածկագրով Սարգիս Դանիելյանին պատկանող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ գ.Լեռնապատ 31 փողոց 15 տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2020թ. Հունվար 29
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ.Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, 27 փողոց 7/6
հեռ. /0322/- 6-87-81

# ՈՐՈՇՈՒՄ

16 Հունվար 2020 թվականի թիվ_5 -Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 06-041-0022-0001 ԾԱԾԿԱԳՐԻՑ 0,1020հա ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով և ՀՀ կառավարության 16.02.2006թ. N 2387-Ն որոշման 48 կետով՝ ՀՀ <<նորմատիվ իրավական ակտերիմասին>> օրենքի 1 հոդվածի 2 մասով,37 հոդվածով-որոշում եմ:

1. Լեռնապատ համայնքի համայնքային սեփականություն համարվող կադաստրային քարտեզի 06-041-0022-0001 ծածկագրի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից տարանջատել 0,1020 հա/հատակագիծը կցվում է/
2. Տրամադրել փոստային հասցե գյուղ Լեռնապատ 38փողոց 7/1:
4.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 17.09.2019թ թիվ 32-Ա որոշումը:

3.Դիմել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի ստորաբաժանում:

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

2020թ. Հունվար 16
գ. Լեռնապատ